# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք, ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, Հեռ. /374/ 93968825 ,
margahovit.lori@mta.gov.am

N 184
*31 մայիս 2018թ.*

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նալբանդյան.

Ներկայացնում եմ Մարգահովիտ համայնքի ղեկավարի թիվ, թիվ 152-Ա, 153-Ա, 154-Ա որոշումները:

Առդիր 3 թերթ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խառապյան*
*Հեռ. /374 94/ 39-19-86*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, (374) 93968825 , margahovit.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 152-Ա

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 06-070-0056-0004 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ-օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով. ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, և հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /գրանցամատյան թիվ 1553/, 06-070-0056-0004 ծածկագրի տակ գտնվող 0.11842 հա փաստացի օգտագործվող հողամասի, բնակելի տան նկատմամբ վերականգնել և ճանաչել Անդրանիկ Գասպարյանին /ծնված 1967թ./ սեփականության իրավունքը:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:
3. Վերականգնել և ճանաչել 0.11842 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1950 թվականին կառուցված 2.81 քմ բնակելի տան, 1950 թվականին կառուցված 47.51 քմ բնակելի տան, 1985 թվականին կառուցված 16,92 քմ մառանի Անդրանիկ Գասպարյանին /ծնված 1967թ./ սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Անվավեր ճանաչել Մարգահովիտ համայնքի ղեկավարի 16.05.2018թ. թիվ 150-Ա որոշումը:
6. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Մարգահովիտ համայնք, 1 փողոց, 42/1 բնակելի տուն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, (374) 93968825, margahovit.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 153-Ա

### ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ՓՈՓՈԽՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ, ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով Մարգահովիտ համայնքի ավագանու 22.05.2018թ. թիվ 21-Ն որոշումը 2018թ. բյուջեի փոփոխությունները հաստատելու մասին.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. Հաստատել Մարգահովիտ համայնքի 2018թ. փոփոխված բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. Ս. ԱՆԱՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, (374) 93968825 , margahovit.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

30 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 154-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 06-070-0119-0007 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԽՈՐԴԱՆՈՑԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՐԱՀԻ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ««Տեղական ինքնակառավարման մասին»» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2.02.2002թ. թիվ 88 որոշմամբ, հիմք ընդունելով քաղաքացի Աշոտ Գալստյանի դիմումը և Մարգահովիտ համայնքի ավագանու 22.05.2018թ. թիվ 20-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մարգահովիտ համայնքի 21-6 փողոց 4 տան սեփականատեր Աշոտ Ալեքսանի Գալստյանին պատկանող 06-070-0119-0007 ծածկագրի տակ գտնվող 193.52 քմ խորդանոցի նպատակային նշանակությունը փոխարինել հասարակական սրահի:
2. Որոշումը ենթակա է գրանցման ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Պ.Կ.-ի Վանաձորի տարածքային ստորաբաժանումում:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ